Քննարկված է մանկավարժական խորհրդի նիստում
—31—.08——.2023
Հաստատում եմ՝ Ն. Ստեփանյան

2023-2024 ուստարի

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի N4 հիմն. դպրոցի համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների պլան



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս, դպրոցի առաքելությունը
2. Խնդիրներ և նպատակներ
3. Կրթության գործընթացի կազմակերպում
4. Ուսումնադաստիարակչական աշխատանքներ
5. Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներ
6. ԿԱՊԿՈՒ սովորողների հետ տարվող աշխատանքներ
7. Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում
8. Ներդպրոցական վերահսկողության համակարգ

ՀՀ Սյունիքի մարզի <Սիսիան քաղաքի հ.4 հիմնական դպրոց> ՊՈԱԿ-ը իրականացնումէհիմնական ընդհանուր հանրակրթական ծրագրեր՝ առաջին և երկրորդ աստիճանի:

Մեր դպրոցի առաքելությունն է՝

- բացահայտելով յուրաքանչյուր սովորողի՝ հոգեկերտվածքի, մտածողության զարգացման առանձնահատկությունները՝ ձևավորել ինքնատիպ հոգեկերտվածքով յուրահատուկ մտածողությամբ անհատականություններ
- ունենալ կրթված, հայրենասեր սերունդ, ապահով, անվտանգ ապագա:

Ներածություն

2022-2023 ուստարում Սիսիանի հ.4 հիմնական դպրոցը գործել է <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքների և դպրոցի կանոնադրության հիման վրա: Դպրոցն առաջնորդվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով և այլ իրավական նորմատիվ ակտերով: Դպրոցն իր գործունեությունն իրականացրել է մանկավարժական խորհրդի որոշմամբ հավանության արժանացած 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանով:

2022-23 ուստարին դպրոցը դիմավորել է ֆիզիկական բարելավված տվյալներով: ՀՕՖ-ը 44260.0 դրամի ներդրումով վերանորոգել է դպրոցի սանհանգույցները, 3-րդ հարկի միջանցքը: Առայժմ լուծված չէ դպրոցի գույքի թարմացման խնդիրը:

2022-2023 ուստարում դպրոցի մանկավարժական աշխատողների ընդանուր թիվը 44 էր, որից 38՝ դասավանդող ուսուցիչ: Աշխատակիցների ընդհանուր թիվը 56 էր, որից 11-ը կենսաթոշակային տարիքի:

2022-2023 ուստարում պարապվել է 573 ժամ, որից 39 կիսվող, 10՝ տնային ուսուցում: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 18 ժամ էր:

2022-2023 ուստարում ներդրվել է նոր առարկա՝ <<Ազգային երգ ու պար>>:

Դպրոցը համագործակցել է Սիսիանի ՏՄԱԿ-ի հետ՝ ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթության գործը համատեղ իրականացնելով:

2022-2023 ուստարում կրտսեր դպրոցի 218 աշակերտի անխափան տրամադրվել է տաք սնունդ:

Դպրոցի 8 ուսուցիչներ մասնակցել են պարտադիր ատեստավորման համար վերապատրաստման դասընթացի, ստացել են 11 կրեդիտ, ատեստավորվել են: 6 ուսուցիչ՝ Լ. Վարդանյանը, Ն. Ալեքսանյանը, Է.Սարգսյանը, Հ. Ենոքյանը,Է. Տեր-Հովսեփյանը, Զ. Սահակյանը մասնակցել են կամավոր ատեստավորմանը: 5 ուսուցիչներ հաղթահարել են սահմանված շեմը, 4 ուսուցիչ ստանում են հավելավճար:

2023-2024 ուստարում շարունակվելու է ուսուցիչների ընդգրկումը պարտադիր ատեստավորման գործընթացին:

2022-2023 ուստարում դպրոցի դասապրոցեսը կազմակերպվել է առկա ուսուցմամբ: Տարվա ընթացքում տնօրենության կողմից ՆԴՎ-ի շրջանակներում իրականացվել է վերահսկողություն կրթական գործընթացի նկատմամբ:

2022-2023 ուստարում դպրոցը աշխատել է երկհերթ: Ուսումնական տարին ավարտվել է՝ ապահովելով 30 ուսումնական շաբաթ 1-ին դասարանում, 32՝ 2-րդ, 34՝ 3-9-րդ դասարաններում: Ապահովվել է առարկայական ծրագրերի կատարումը:

2022-2023 ուստարում ԳԹԿ-ի կողմից դպրոցում անցկացնել է արտաքին գնահատում /նոյեմբեր ամսին 8-րդ դասարանում, ապրիլին՝ 4-րդ դասարանում/: Սրանք ազգային և միջազգային ստուգատեսներ էին:

2022-2023 ուստարում՝ 10-14.10.2023թ ժամանակահատվածում, դպրոցում անցկացվել են ստուգումներ ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից, որին աջակցում էին <<Աջակցություն ուսուցման կազմակերպմանը>> ծրագրում ընգրկված հայոց լեզվի և մաթեմատիկայի առարկաների մասնագետներ: Վերջիններս դասալսումներ են անցկացրել հայոց լեզվից և մաթեմատիկայից երեքական ուսուցիչների մոտ երեքական ժամով, օգնել մեթոդապես: Ուստարեվերջին դպրոց են ուղարկվել դասալսումների արդյունքների վերլուծությունը, ինչպես նաև տրված գրավոր աշխատանքների եզրակացությունները, առաջարկները:

Տեսչական մարմնի կողմից ստուգումների արդյունքում կազմվել է ակտ, որտեղ նշված է դպրոցի գործունեության համապատասխանությունը ոլորտը կարգավորող նորմատիվ փաստաթղթերին, պահանջներին: Նշվել է 1 խախտում աշակերտի դպրոց ընդունելու կարգի շրջանակում:

2022-2023 ուստարում նոր ՀՊՉ-ի ներդրմանն ընդառաջ ԿԶՆԱԿ-ը ՀՀ բոլոր մարզերում ընտրեց մենթոր դպրոցներ և դպրոց կենտրոններ, որոնց ներկայացուցիչները վերապատրաստվեցին: Դպրոցները դարձան վերապատրաստող կենտրոններ: Այս գործընթացի մեջ ներառվեց նաև մեր դպրոցը՝ տնօրեն, 3 ուսուցիչներ: Նրանք դարձան մենթորներ և ապրիլ, մայիս ամիսներին ավագ դպրոցի հետ հավասար վերապատրաստեցին մեր տարածաշրջանի տնօրեններին, ուսուցիչներին /30 տնօրեն, 320 ուսուցիչ/: Դպրոցի 4 ուսուցիչներ՝ Գ. Համբարձումյանը, Մ. Գրիգորյանը, Ք. Առաքելյանը, Լ. Միրաբյանը, պարբերաբար ընդգրկվում են ԿԶՆԱԿ-ի ծրագրերում, ստեղծում ուսումնական նյութեր, պաշարներ: ԿԶՆԱԿ-ի հետ համագործակցությունը կլինի շարունակական: Այս շփումների արդյունքում դպրոցը գրանցեց մասնագիտական, մեթոդական աճ, ձեռք բերեց վերապատրաստողի փորձ:

2022-2023 ուստարում համակարգված աշխատել են դպրոցի խորհրդակցական մարմինները, դպրոցի կառավարման խորհուրդը: Հրավիրվել են նիստեր բովանդակալից օրակարգերով, կայացվել կոնկրետ որոշումներ: Դպրոցում գործել են 10 խմբակներ, որոնց կատարած աշխատանքը ցուցադրվել է համադպրոցական միջոցառումների ընթացքում: Իրականացվել է փորձնական նախագծային աշխատանք <<Երիտասարդները հանուն բարենպաստ կլիմայի>> ծրագրի շրջանակում:

2022-2023 ուստարում հ. 4 հիմնական դպրոցում կազմավորվել է 18 դասարան: Տարեսկզբին սովորողների թիվը կազմել է 481 աշակերտ, ԿԱՊԿՈՒ սովորողների թիվը 10 է, շարժի հետևանքով սովորողների թիվը դարձել է 478, որից 252՝տղա, 226՝աղջիկ: Գնահատվել են 421 աշակերտ, 9-ը /1 տնային ուսուցմամբ/ ԱՈՒՊ-ով: Ուսման առաջադիմությունը տարեկան գնահատականներով կազմում է 100%,որակը՝58%: Ունենք 109 գերազանց, որը կազմում է սովորողների ընդհանուր թվի 23%-ը, 135 հարվածային սովորողներ կամ 28%:

Չունենք 120-200 ժամ կամ 200 ժամից ավել բացակայություն ունեցող աշակերտ:

Դպրոցն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել դպրոցական, հանրապետական առարկայական օլիմպիադաներին՝ առցանց և տեղերում, ունեցել ձեռքբերումներ: Մարզային փուլում ունեցել ենք 5 գովասանագիր /հայոց լեզու, աշխարհագրություն, մաթեմատիկա, գրականություն և ՆԶՊ/, 4 դիպլոմ /գրականություն և ՆԶՊ/, հանրապետական փուլից՝ գովասանագիր գրականությունից:

2022-2023 ուտարվա ընթացքում դպրոցը մասնակցել է <<Մեղու>>, <<Կենգուրու>>, <<Ռուսական արջուկ>> առարկայական մրցույթներին, Հանրապետական բաց օլիմիպիադային, ԿԳՄՍ-ի կազմակերպած <<Բարբառը մեր հարստությունն է>> աշակերտների հեղինակային մրցույթին:

2022-2023 ուստարում դպրոցը ավարտել է 46 շրջանավարտ, որոնցից 2 ստացել են հատուկ նմուշի վկայական:

2022-2023 ուստարում դպրոցը աշխատել է ռիթմիկ, աշխատակիցները՝ դպրոցի խորհրդի կողմից հաստատված աշխատաժամանակի գրաֆիկին համապատասխան, չեն գրանցել լուրջ բացթողումներ, արձանագրվել են հաջողություններ /օլիմպիադաներ, տեսչական ստուգումներ, կամավոր ատեստավորում, վերապատրաստման փորձ/:

2022-2023 ուստարում դպրոցը արագ արձագանքել է հանրակրթության ոլորտում ընթացող բարեփոխումներին՝ վարելով ճկուն, խելամիտ կառավարում, գործունեություն:

Դպրոցի առաքելությունն է բարեկիրթ, ուժեղ, հայրենասեր մարդու դաստիարակությունը՝ 21 դարի մարտահրավերներին ընդառաջ:

2022-2023 ուստարում արվել է ևս 1 քայլ:

ԽՆԴԻՐՆԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ

- բարձրացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը.բարձրացնել մրցունակությունը, համագործակցության ոգին, խորացնել աշխատանքները դպրոցի ժողովրդավարացման ուղղությամբ
- 2023-2024 ուստարում շեշտադրել նոր ՀՊՉ ի ներդրումը, խնդիրների հաղթահարումը.
- Իրականացնել կարողունակահեն կրթություն.
- ԿԶՆԱԿ -ի հետ համագործակցության շարունակականության ապահովում.
- խրախուսել պարտադիր, կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների կողմից նոր մեթոդների ներդրումը.
- ուշադրության կենտրոնում պահել դպրոցի մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին, մրցույթներին, հասնել կազմակերպական նոր մակարդակի.
- բարելավել բնագիտական առարկաների դասավանդման դրվածքը, անցկացնել համադպրոցական ստուգատես.
- ուժեղացնել վերահսկողությունը IV, IX դասարաններում, ստուգել մնացորդային գիտելիքը՝ տարեվերջյան քննություններին պատշաճ մակարդակով պատրաստ լինելու ակնկալիքով.
- կարևորել տաղանդավոր աշակերտների հայտնաբերումը, նրանց ունակությունների զարգացումը, կազմակերպել անհատական պարապմունքներ
- աշակերտական և ծնողական խորհուրդների աշխատանքները աշխուժացնել,շեշտադրել նախաձեռնողականությունը
- կատարելագործել դասղեկների աշխատաոճը, մեթոդները, կատարել գործնական աշխատանքներ
- առավել լրջացնել մասնախմբերի աշխատանքները, բարձրացնել նրանց պատասխանատվությունը առարկաների դասավանդման որակի համար, փոխադարձ դասալսումները դարձնելկոնկրետ նպատակայի.
- սիստեմատիկ աշխատել աշակերտների բարեկրթությունը բարձրացնելու ուղղությամբ ուսումնադաստիարակչական աշխատանքների ողջ գործընթացում.
- կարևորել դպրոցի բարետեսությունն ու հարմարավետությունը.
- հասնել առավելագույն կատարողական կարգապահության ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների շրջանում.
- անցկացնել դպրոցի ներքին գնահատում՝ ցուցանիշների բարելավմամբ
- պատշաճ կազմակերպելկրտսեր դպրոցի<դպրոցական սնունդ> ծրագիրը՝ առաջադրվող բոլոր պահանջներին համապատասխան.

- նոր հիմնված լաբորատորիայի հնարավորությունների առավելագույն օգտագործում, բնագիտության ուսուցման գործնականացում.
- Նորովի կահավորել դպրոցական ճաշարանը, բարելավել սանիտարական պայմանները, հարմարավետությունը.
- դպրոցում ԿԱՊԿՈՒ սովորողների կրթություն կազմակերպման աշխատանքների որակը շարունակաբարբարձրացնել
- համակարգված իրականացնել ԴԿՏՀ-ի, ԴՏՀՏՇՀ-ի կառավարման ավտոմատացված համակարգի պահանջների կատարում
- առանձին առարկաների դասավանդման դրվածքի մշտադիտարկում, քննարկում,կամավոր ատեստավորումանցած ուսուցիչների շարքի համալրում
- առանձին ուսուցիչների , դասղեկների փորձի ուսումնասիրում, գնահատում, տարածում
- աշխատանքներ տանել տարակարգի չափանիշների բավարարման ուղղությամբ
- այլընտրանքային ուսուցման ձևերի որոնում համացանցի միջոցով.
- ԿՁՆԱԿ-ի կայքի կրթական նյութերի, փաստաթղթերի, պլանների համակարգված ուսումնասիրման, դասերի մասնակցության ապահովում.

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

h	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Վերահսկող	Ծանոթություն
1	2023-2024 ուստարվա աշխատանքային պլանի կազմում, քննարկում, մ/խ-ի նիստում	Օգոստոսի վերջին շաբաթ	Ն. Ստեփանյան		
2	մ/խ-ի հերթական և արտահերթ 11 նիստերի պլանավորում, աշխատակարգի սահմանում	Օգոստոսի վերջին շաբաթ	Ն. Ստեփանյան		
3	Տնօրենին կից խորհրդակցությունների պլանավորում		Ն. Ստեփանյան		
4	Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի պլանավորում (5 նիստ)	Օգոստոսի վերջին շաբաթ	ԴԽ-ի նախագահ		
5	Տնօրենի տեղակալների, ԴԱԿ-ի, մ/մ նախագահների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, գրադարանավարի, դասղեկների պլանների, խմբակների ծրագրերի, թեմատիկների, արձանագրության	Օգոստոսի վերջին շաբաթ	Տնօրեն Ն. ստեփանյան Մանկավարժական աշխատողներ		

	մատյանների կազմում, հաստատում:				
6	Թեմատիկ պլանների կազմում, հաստատում	սեպտեմբեր	ուսուցիչներ	Տնօրեն Ն. Ստեփանյան	
7	ԴԿՏՀ-ում ուստարեսկզբի աշխատանքների կազմակերպում, 1-ին դասարանների ձևավորում, անձնական գործերի կազմում	Օգոստոս - սեպտեմբեր	Էլ կառ համակարգի մասնագետ Ռ. Առաքելյան	Տնօրեն Ն. Ստեփանյան	
8	ԴԿՏՀ-ում դպրոցի տվյալների շտկում, նոր պահանջների կատարում	Օգոստոս - սեպտեմբեր	Էլ կառ համակարգի մասնագետ Ռ. Առաքելյան	Տնօրեն Ն. Ստեփանյան	
9	2023-2024 ուստարեսկզբի հրամանների նախագծերի մշակում, ձևակերպում, գործածության մեջ դնում	սեպտեմբեր	Տնօրեն Ն. Ստեփանյան		
10	Դասագրքերի բաշխում	Օգոստոս	Գրադարանավար Ա. Հովսեփյան	դասղեկներ	
11	Դպրոցի ուսպլանի, դասաբաշխման, ԱՈՒՊ-ների, տնային ուսուցման ուսպլանի, 1-ին կիսամյակի դասացուցակի հաստատում	Օգոստոս սեպտեմբեր	Տնօրեն Ն. Ստեփանյան		
12	Երկհերթ աշխատանքային ռեժիմի հաստատում	Օգոստոս սեպտեմբեր	Տնօրեն Ն. Ստեփանյան		
13	Կրտսեր դպրոցում տաք սննդի կազմակերպում	սեպտեմբեր	ՄԿԱ գծ տեղ Ա. Իսաջանյան	Տնօրեն Ն. Ստեփանյան	
14	Ուսուցչի թափուր տեղի մրցույթների անցկացում	սեպտեմբեր	Տնօրեն Ն. Ստեփանյան		
15	Դպրոցի կայքի թարմացում	սեպտեմբեր	Էլ կառ համակարգի մասնագետ Ռ. Առաքելյան	Տնօրեն Ն. Ստեփանյան	
16	ԱԽ-ի, ԾԽ-ի ձևավորում	սեպտեմբեր	ԴԱԿ Լ. Հովհաննիսյան և ՄԿԱ գծ տեղակալ Ա. Իսաջանյան	Տնօրեն Ն. Ստեփանյան	
17	Տոնական միջոցառումների և հիշատակի օրերին գործողությունների	սեպտեմբեր	ԴԱԿ Լ. Հովհաննիսյան և ՄԿԱ գծ տեղակալ Ա.	Տնօրեն Ն. Ստեփանյան	

	միջոցառումների ժամանակացույցի ներկայացում և հաստատում		Իսաջանյան		

18	Դպրոցի բյուջեի նախագծի, բյուջետային օրացույցի կազմում ըստ ՀՀ կառավարության 22.09.2022 թ.ի h 1481-Ն հրամանով հաստատված նոր կարգի	սեպտեմբեր	Տնօրեն Ն. Ստեփանյան, հաշվապահ		
19	Դպրոցի հերթապահության գրաֆիկի հաստատում	սեպտեմբեր	ՄԿԱ գծ տեղակալ Ա. Իսաջանյան	Տնօրեն Ն. Ստեփանյան	
20	Դպրոցի մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների աշխատանքային ռեժիմի կազմում, հաստատում	սեպտեմբեր	Անձնակազմի կառ մասնագետ Կ. Մուսայելյան	Տնօրեն Ն. Ստեփանյան	
21	Մանկավարժական խորհրդի նիստերի, օրակարգերի պլանավորում	սեպտեմբեր	Տնօրեն Ն. Ստեփանյան, տնօրենի տեղակալներ	Տնօրեն Ն. Ստեփանյան	

Ուսումնադաստիարակչական աշխատանքներ

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- ✓ Կարողունակահեն կրթության իրականացում. բոլոր օղակներում տարեկան աշխատանքների պլանավորում, ամսական աշխատանքների պլանավորում. գործողությունների նախատեսում
- ✓ Սովորողների համակողմոնի կրթության և դաստիարակության համար պայմանների ստեղծում, մոտեցում ուսումնադաստիրակչական խնդիրներին, յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ անհատական մոտեցման դրսևորում
- ✓ ինտեգրված ուսուցման կազմակերպում, նախագծային աշխատանքներ
- ✓ Ուսուցիչների ստեղծագործական ունակությունների խթանում, զարգացում, ինքնութույնությունը, նորագույն տեխնոլոգիաներին տիրապետումը:
- ✓ Ուսուցման և դաստիրակության միասնականության ապահովում, տարբերակելով կրտսեր , միջին դպրոցների խնդիրները , նպատակները:
- ✓ Լաբորատորիաների ,կաբինետների կահավորման ուղղությամբ աշխատանքի կազմակերպում, դրանք ծառայեցնելով ուսուցման որակի բարձրացմանը:
- ✓ Նախասիրություն ունեցող աշակերտների Խրախուսում, նրանց ընգրկում ինչպես արտադասարանական, այնպես էլ արտադպրոցական խմբակներում :

- ✓ .Ուսումնադաստիրակչական խնդիրները լուծելիս անհրաժեշտության դեպքում դիմել դպրոցի , ծնողական խորհրդի օգնությանը:
- ✓ ԿԱՊԿՈՒ սովորողների գնահատում, ԱՈՒՊ-ներով աշխատելու հմտությունների մշակում ուսուցիչների շրջանում:
- ✓ Վիրտուալ տիրույթում կազմակերպվող դասընթացներին Ուսուցիչների և աշակերտների մասնակցության Ապահովում:
- ✓ Երկարօրյա ժամերի նպատակային օգտագործում
- ✓ Ուսուցման գործընթացը մանկավարժության տեսության համապատասխան կազմակերպում
- ✓ Պատասխանատվություն յուրաքանչյուր աշակերտի կրթական գործընթացի համար (ԿԱՊԿՈՒ սովորող, կրթության մեջ դժվարություն ունեցող, վարքի խնդիր ունեցող, կյանքի դժվարին պայմաններում հայտնված արտակարգ ունակություններ դրսևորող
- ✓ Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների համակարգված միասնական մոտեցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը, իրականացմանը
- ✓ Առաջնորդների, նորարարների խմբի ստեղծում, շարքերի ստվարացում

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. h	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարող	վերահսկող	ծանոթություն
2.	Կազմել 2023-2024 ուստարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը ԴԶԾ-ին համապատասխան: Քննարկել մանկավարժական խորհրդում, հաստատել, առաջնորդվել դրանով:	Օգոստոս, Ուստարվա ընթացքում	Տնօրեն Ն. Ստեփանյան Մանկավարժական անձնակազմ	Տնօրեն Ն. Ստեփանյան	
3.	Կազմել 2023-2024 ուստարվա տնօրենի տեղակալների, մեթոդ միավորման, դասղեկների, գրադարանավարի, ուսուցչի օգնականների, լաբորանտների աշխատանքային պլանները համադպրոցական ՈՒԴԱՊ-ին համապատասխան ներկայացնել հաստատման, առաջնորդվել դրանով:	սեպտեմբեր Ուստարվա ընթացքում	Մանկավարժական անձնակազմ	Տնօրեն Ն. Ստեփանյան	
4.	Մշտադիտարկում իրականացնել 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում	Սեպտեմբեր, նոյեմբեր,փետրվար, ապրիլ	Տնօրեն Ն. Ստեփանյան Ուսմոսվար՝	Տնօրեն Ն. Ստեփանյան	

	ուսումնադաստիարակչ ական աշխատանքների կազմակերպման և նոր ՀՊՀ-ի դրույթների համապատասխանությունը որոշելու նպատակով: Ա) իրականացնել դասալսումներ Բ) կազմակերպել խորհրդատվություն Գ)կազմակերպել փոխադարձ դասալսումներ Դ)արդյունները քննարկել տնօրենին կից ընդլայնված խորհրդակցությունում, կայացնել որոշումներ, իրականացնել		Ն. Հարությունյան Մ/Մ նախագահներ		
5.	Պլանավորել հանրապետական առարկայական օլիմպիադայի ուղղությամբ աշխատանքները, քննարկել մանկորհի և ծնողական խորհրդի նիստերում	սեպտեմբեր	Մ/Մ նախագահներ, ուսուցիչներ	Տնօրեն Ն. Ստեփանյան	
6.	Ուսման մեջ ետ մնացող սովորողների համար կազմակերպել երկարօրյա ուսուցում	Ուստարվա ընթացքում	մ/մ նախագահներ, Ուսուցիչներ	Տնօրեն Ն. Ստեփանյան Ուս. գծով տնօրենի տեղակալ՝ Ն. Հարությունյան	
7.	Պլանավորել և կազմակերպել խմբակների աշխատանքը	սեպտեմբեր	խմբակավարներ, ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	Տնօրեն Ն. Ստեփանյան ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	
8.	Կազմակերպել առարկայական շաբաթներ Ա) բաց-դասեր, ցուցահանդեսներ Բ)ուսումնական էքսկուրսիաներ	Երկրորդ կիսամյակ	մ/մ նախագահներ, դասղեկներ	Ուս. գծով տնօրենի տեղակալ՝ Ն. Հարությունյան Տնօրեն Ն. Ստեփանյան ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	
9.	Հայտնաբերել օժտված երեխաներին, կազմակերպել նրանց ստեղծագործական որոնողական				

	աշխատանքը				

Դասղեկական աշխատանքների կոորդինացում

	Հրավիրել դասղեկների խորհրդակցություն Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման:				
	Դասղեկներին ծանոթացնել հոգեբանի գործառույթներին, պլանավորել, համատեղել աշխատանքում:				
	Դասղեկներից պահանջել՝աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները.ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ:Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն,նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն:Դաստիարակության հիմքում դնել հիմնական հանրակրթական դպրոցի շրջանավարտների նկարագրի պահանջները:				
	Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ (ընտրված թեմաներով) և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:	Ամբողջ տարին	Դասղեկներ	ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	
	Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունը, օգտագործել դասարանական առցանց խմբերի հնարավորությունները:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ	ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	
	Կիսամյակը 2 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով:Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ:	Սեպտեմբեր, դեկտեմբեր,փետրվար, մայիս	Դասղեկներ	ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	
	Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ/բաղկացած 3-5 հոգուց/,ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը: Սահմանել բաց դռների օր,	սեպտեմբեր	Դասղեկներ	ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	

	ապահովել ծնող-ուսուցիչ կապը (4-րդ օրը)				
	Ամրապնդել հոգեբան, դասղեկ, ծնող կապը	Տարվա ընթացքում	ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	Տնօրեն Ն. Ստեփանյան	
	Դասղեկների կողմից համակարգված աշխատանք կատարել ԴԿՏՀ ում,առցանց դասարանական խմբերում	Տարվա ընթացքում	Դասղեկներ		

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

19.	Շեշտադրել աշակերտների գեղագիտական դաստիարակության բարելավումը	Տարվա ընթացքում	Երաժշտության, կերպարվեստի, գրականության ուսուցիչներ, ԴԱԿ	ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	
20.	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել մրցույթներ, սպարտակիադաներ, հաշվետու համերգներ:	ուստարեսկիզբ	Դասղեկներ, ԴԱԿ	ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	
21.	Կազմակերպել նկարող աշակերտների գործերի ցուցահանդես, երաժշտական կրթությամբ աշակերտների համերգ	Մարտ, ապրիլ	Երաժշտության, կերպարվեստի, գրականության ուսուցիչներ, ԴԱԿ	ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյան	

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

22.	Բարձրացնել ՆԶՊ-ի, ֆիզկուլտուրայի, Հայոց պատմության դասավանդման որակը Ա)կազմակերպել մրցումներ Բ)հաղորդումների, ֆիլմերի դիտումներ Գ)հայոց պատմությունից մրցույթներ	Տարվա ընթացքում	Գ. Ադոնց, Գ. Սաֆյան, Ն. Ալեքսանյան	ՄԿԱ գծ տնօրենի տեղակալ Ա. Իսաջանյանուս գծով փոխտնօրեն՝ Ն. Հարությունյան	
23.	Այցելություն Հայրենական մեծ պատերազմում, Արցախի անկախության, Հայաստանի սահմանների պաշտպանության համար զոհված մարտիկների հուշարձաններին, պանթեոն:				

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

24.	Բարձրացնել <Տեխնոլոգիա> առարկայի ուսուցման դրվածքը,				

	աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը,				
25.	Ստեղծել խմբակներ <Դպրոցական արհեստագործներ> խմբակներ միջին դպրոցում:				

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

	Օգնել գրադարանավարին կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը:				
26.	Քննարկել գրադարանավարի պաշտոնին ներկայացվող պահանջները, գործառույթները, նկարագիրը				
	Հարստացնել գրադարանային ֆոնդը:Վերանորոգել գրադարանային ֆոնդում եղած դասագրքերն ու գրքերը:				
27.	Դասագրքերի տրամադրման և փոխանակման ուղղությամբ կազմակերպել աշխատանք ԴՏՀԴՏԾՀ-ում, ակտիվացնել աշխատանքը այլ դպրոցների հետ:				

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

28.	Հրավիրել դասարանական, դպրոցական ծնողական ժողովներ, գումարել ԾԽ-ի նիստերը ըստ 1-ին նիստում հաստատված աշխատակարգի				
29.	Նախապատրաստել դպրոցական ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև ծառացած համատեղ լուծման ենթակա հարցերը, դպրոցի զարգացման հեռանկարները:				
30.	Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և զեկուցումների թեմատիկ պլան				
	Օգնել պանավորելու ծնողական խորհրդի աշխատանքները:				
31.	Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում:				
32.	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքներին, կրտսեր դպրոցի սննդի կազմակերպմանը				

33.					

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքները
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Առարկայական մասնախմբերի աշխատանքները պլանավորելիս առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

- Աշխատանքների պլանավորում ուստարվա և ամիսների կտրվածքով
- Հերթական և արտահերթ նիստերի օրակարգերի կազմում կարիքի գնահատման հիման վրա
- Նոր ՀՊՉ-ի ներդրման գործընթացի (2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում ուսուցման, երկարօրյայի, նախագծային աշխատնքի) առաջնահերթության սահմանում.
- Թիմս հարթակում ԿՁՆԱԿ-ի ստեղծած մ/մ -ների, ուսուցիչների խմբերում աշխատելու հմտությունների ձևավորում.
- Փոխադարձ դասալսումների, բաց դասերի կազմակերպում.
- Ուսուցիչների ինքնակրթության գործի պլանավորում.
- Առարկայական միջոցառումների պլանավորում.
- Թեմատիկ պլանավորումների առկայության, դրանց կատարողականի վերահսկում
- Օլիմպիադաների առաջին փուլի նախապատրաստում և անցկացնում.
- Երիտասարդ ու սկսնակ ուսուցիչների պատրաստականության բարձրացման, որակական աճի հարցի կարևորում
- Մ/Մ ի նիստերում քննարկել դժվարամատչելի թեմաների, ատեստավորված ուսուցիչների հետազոտական աշխատանքների, ուսուցման ձևերն ու մեթոդները, կազմել զեկուցումներ, դրանք տեղադրել կրթական կայքերում:
- Ուսուցիչների ստեղծագործական աշխատանքի Խթանում.
- Ապահովել ուսուցիչների մասնակցությունը ԿՁՆԱԿ–ի կողմից կազմակերպվող դասընթացներին, հաղորդակից դարձնելառաջարկվող կրթական նյութերին, պլաններին:
- Աշխատանքային ճկուն քաղաքականություն, առկա աշխատանքից հեռավարին անցնելու հմտությունների մշակում :
- վիրտուալ հարթակում մեթոդմիավորման աշխատանքների կազմակերպման հմտությունների մշակում :
- Ուշադրություն դարձնել ատեստավորված ուսուցիչների ՏՀՏ գիտելիքներին, կարողությունների աճին, դրանց գործնական կիրառությանը.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող	Վերահսկող	Ծանոթություն
1.	Մ/մ հերթական նիստերի հրավիրում	Ամեն ամսվա վերջին շաբաթ	Մ/մ նախագահներ	Ուսմասվար Ն.Հարությունյան	
2.	Մ/մ արտահերթ նիստերի հրավիրում, նոր ՀՊՉ-ի ներդրման հետ կապված խնդիիրների քննարկում	Ըստ անհրաժեշտության	Մ/մ նախագահներ	Ուսմասվար Ն.Հարությունյան	
3.	Նախնական դասաբաշխման իրականացում	Հունիսի երրորդ շաբաթ	Մ/մ նախագահներ		
4.	Դպրոցական բաղադրիչի բաշխման վերաբերյալ առաջարկ	Օգոստոսի 4-րդ շաբաթ	Մ/մ նախագահներ		
5.	Առարկայական պլիմպիադաների կազմակերպում	Նոյեմբեր, դեկտեմբեր	Մ/մ նախագահներ	Ուսմասվար Ն.Հարությունյան	
6.	Մ/մ անդամ ուսուցիչների որակավորման բարձրացման մասնագիտական մեթոդական մանկավարժական գիտելիքների հարստացման, հմտությունների ձևավորման, փորձի փոխանակման աշխատանքների կազմակերպում ա) մանավարժական մեթոդական ընթերցումներ բ) դասալսումներ հմուտ ուսուցիչների մոտ գ) սկսնակ ուսուցիչների համար խորհրդատվության կազմակերպում դ) ուսուցիչների որակավորման տարակարգի կարգի քննարկում, աջակցության կազմակերպում	Տարվա ընթացքում նիստերի ժամանակ հոկտեմբեր, նոյեմբեր, մարտ ամեն ամիս առաջին շաբաթ սեպտեմբեր	Մ/մ նախագահներ, ուսուցիչներ	Տնօրեն՝ Ն. Ստեփանյան ուսմասվար Ն. Հարությունյան	
7.	Ուսումնական նախագծերի	Սեպտեմ	Մ/մ	Տնօրեն՝	

	թեմաների պլանավորման աջակցության կազմակերպում	բեր	նախագահներ, ուսուցիչներ	Ն. Ստեփանյան ուսմասվար Ն. Հարությունյան	
8.	Երկարօրյայի կարգի քննարկում, աշակերտների նախնական հայտի ներկայացում	սեպտեմ բեր			
9.	Նոր ՀՊՉ-ի ներդրման ուղղությամբ աշխատանքներ Ա)2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների դասագրքերի, մեթոդական ձեռնաարկների առանձին թեմաների ծուրջ կազմակերպում (դասալսումներ) 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում Բ) գնահատման նոր համակարգի հետ կապված քննարկումների կազմակերպում (դասալսումներ) Գ)դասի պլանների քննարկում (դասալսումներ) Դ)դասագրքերի QR կոդերով նյութերը, դրանցով ուսուցման կազմակերպման խնդիրները, ձևերը, ուղիները, դժվարությունները (դասալսումներ)	Մ/մ արտահերթ նիստեր	Մ/մ նախագահներ, ուսուցիչներ	Տնօրեն՝ Ն. Ստեփանյան ուսմասվար Ն. Հարությունյան	
10.	Թիմսի հարթակի, ԿԶՆԱԿ-ի ուսունական նյութերի քննարկումներ և ներդրումներ	Ուստար եսկիզբ	Մ/մ նախագահներ, ուսուցիչներ	ուսմասվար Ն. Հարությունյան	
11.	Առանձին ուսուցիչների ԿԶՆԱԿԻ ծրագրերում ընդգրկվածության շարունակականության ապահովում	Տարվա ընթացքում	Մ/մ նախագահներ, ուսուցիչներ	ուսմասվար Ն. Հարությունյան	
12.	ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման ԱՈՒՊ ներով կազմակերպումը, դրանց կազմումը, գործընթացները	Սեպտեմբեր, տարվա ընթացքում	ուսուցիչներ	ուսմասվար Ն. Հարությունյան	

13.	ՀՀ կառավարության 16.02.2023 թ. հ-216-Ն որոշումով հաստատված ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, գրադարանավարի պաշտոնների նկարագրի, գործառույթների, պաշտոնի ներկայացվող ընդհանրական պահանջների, որակավորման պահանջների քննարկում	օգոստոս			
14.	Ուսումնական առաջադրանքների շտեմարանի ստեղծման շարունակականության ապահովում	Տարվա ընթացքում			

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

N	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող	վերահսկող	Ծանոթություն
1	2	3		4	5
1	Պլանավորել դպրոցի 2023-2024 ուստարվա ֆինանսատնտեսական գործունեությունը և ուսումնանյութական բազայի համալրումը	օգոստոս	Ն. Ստեփանյան Մ. Սամվելյան Գ.Համբարձումյան	Ն. Ստեփանյան	
2	Նոր ֆինանսավորման բանաձևին համապատասխան ԴԿՏՀ ներմուծել 2023-2024 ուստարվա բյուջեն ձևավորող բոլոր անհրաժեշտ տվյալները				
3	Դպրոցի բյուջեի նախագծի, բյուջետային օրացույցի կազմում ըստ ՀՀ կառավարության	սեպտեմբեր	Տնօրեն Ն. Ստեփանյան, հաշվապահ		

	22.09.2022 թ.ի h 1481-Ն հրամանով հաստատված նոր կարգի				
3	Կազմել նոր հաստիքացուցակ 2023-2024 ուստարվա համար	սեպտեմբեր, հունվար	Ն. Ստեփանյան, հանձ	ԴԽ	
4	Կազմել ծախսերի նախահաշիվ, քննարկել դպրոցի խորհրդում և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական բաժին:	ուստարվա ընթացքում	Մ, Սամվելյան, Ն. Ստեփանյան	դպրոցական խորհուրդ	
3	Կազմել գնումների պլան	հունվար	Ն. Ստեփանյան Մ. Սամվելյան	ԴԽ	
4	Ժամանակին դիմել մարզպետարանին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ շենքի վերանորոգման, գույքի ձեռք բերման նպատակով համապատասխան թույլտվություն ստանալու համար	ուստարվա ընթացքում	Ն. Ստեփանյան	ԴԽ	
5	Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ:	ուս տարվա ընթացքում	Յ. Քարամյան, դասղեկներ, լաբորանտ, Ռ. Առաքելյան, Ա. Հովսեփյան	Ն. Ստեփանյան	
6	Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում:	նոյեմբեր	Յ. Քարամյան, գույքագրման հանձնաժողով	Ն. Ստեփանյան	
7	Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	ուստարվա ընթացքում	Յ. Քարամյան հնոցապան	Ն. Ստեփանյան	
8	Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը:	ուստարվա ընթացքում	Բակապահ, տեխնոլ. Ուսուցիչներ, ֆիզկ. ուսուցիչներ	Յ. Քարամյան	
9	Աշխատանք տանել կաբինետների և	մշտապես	Յ. Քարամյան, կաբինետների	Ն. Ստեփանյան	

	լաբորատորիաների կահավորման, հարստացման, եղած գույքն ու սարքավորումներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:		և լաբորատորիաների վարիչներ		
10	Կազմակերպել գնում կտսեր դպրոցի տաք սնունդը կազմակերպելու նպատակով:	ուստարվա ընթացքում	Ա. Իսաջանյան ծնողխորհուրդ	Ն. Ստեփանյան	
11	Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին:	ուստարվա ընթացքում	Հնոցապան, Յ. Քարամյան	Ն. Ստեփանյան	